լու: Հայերը, ընդունելով օտար կրօնքը, նրա վրայ դնում են իրանց ազգային դրոշմը, նրան յարմարեցնում են իրանց պատմութեան, աւանդութիւնների, սովորութիւնների եւ ցեղական յատկութիւնների հետ: Այդ ազգային մի մեծ ձիրք է, որից զուրկ են շատ ազգեր: Գերի բերելով յունաց աստուածներին, մեր նախնիքը հայեացրին նրանց, մինչեւ անգամ նրանց անունները փոխեցին: Հրաւիրելով պարսից աստուածներին, նոյնպէս վարուեցան նրանց հետ: Քրիստոնէական եկեղեցին, որ առաքեալների ձեռքով հիմնուեցաւ Հայաստանում, բայց լուսաւորչի ձեռքով բոլորովին կերպարանափոխուեցաւ: Հայերը չմիացան ոչ Հռոմի եւ ոչ Բիւզանդիայի եկեղեցիների հետ: Վերջին ժամանակներում մտաւ հայերի մի մասի մէջ կաթոլիկութիւնը եւ բողոքականութիւնը: Առաջինը, կաթոլիկութիւնը, նոյնպէս ազգային կերպարանք ստացաւ եւ դարձաւ իսկական հայ-կաթոլիկութիւն: Հայերը պահպանեցին իրանց եկեղեցական վաղեմի ծէսերը, արարողութիւնները, պաշտամունքը եւ, որ ամենագլխաւորն է՝ լեզուն: Իսկ բողոքականութիւնը դեռ հայերի մէջ ազգային գոյն չէ ստացել: Այն, որ Ջալլադը նկարագրեց, միսիոնարի բողոքականութիւն է:

— Ի՞նչ պէտք է անել Ջալլադի կարծիքով:

— Նրա կարծիքով, պէտք է աշխատել հեռացնելու միսիոնարների թէ՛ ազդեցութիւնը եւ թէ՛ ներգործութիւնը, եւ կազմել ինքնուրոյն հայ-բողոքական եկեղեցի: Եւ այդ կը լինի նրա գործունէութեան բուն նպատակը:

— Կը յաջողի՞ նրան:

— Ես հաւատացած եմ, որ կը յաջողի: Նա չափազանց եռանդոտ եւ հաստատ կամքի տէր մարդ է:

Սենեակի դուռը կամաց բացուեցաւ, պանդոկի սպասաւորներից մէկը գլուխը ներս բերեց, ասելով.

— Մի մարդ հարցնում է ձեզ:

Ասլանը հրամայեց, որ ներս թողնեն: Քանի րոպէից յետոյ ներս մտաւ մի անծանօթ երիտասարդ, նուրբ կազմուածքով եւ բաւական մաքուր հագնուած եւրոպական հագուստով: Նա քաղաքավարութեամբ գլուխ տուեց, մօտեցաւ Ասլանին, սեղմեց նրա ձեռքը եւ տուեց մի փոքրիկ նամակ: Ասլանը շտապով բաց արեց նամակը, կարդաց եւ, վերջացնելուց յետոյ, ասաց երիտասարդին.

— Մենք իսկոյն պատրաստ կը լինենք, յարգելի Արփիար, դուք եւս պատրաստուեցէք, որ շուտով ճանապարհ ընկնենք: Ահա ձեզ զէնքեր, իսկ պանդոկի բակում կապած է ձեզ համար մի գեղեցիկ ձի: